

# ԶՅՈՒՆԷ ԼԵՆԻՆԸ



ՊԵՏՏՐՈՍ — ՄԱՆԿԶՐԱՏԲԱԺԻՆ — ՅԵՐԵՎԱՆ  
1935

Նկարներ ԲԵԼՅԱՆԻՆԻ  
Փոխադ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



Պատ խմբագիր Ա. Հայրյան. Տեխ խմբագիր Հ. Տեր Դավթյան.  
Սրբագրիչ Մ. Գեվորգյան.

Հանձնված է արտադրության 20X-1535 ք Ստորագրված է  
տպելու 1X1- 9 5 ք Ստուսփորմատ + 6 - 105.148 Գլավիւս  
Վ. 274. Պատվեր № Բ016 Տիւմ 15000.


Тип. им. Стачки 1902 г. АЧК Т РОСІОВ-ЛОИ

3299

891.714

9-63

30 MAY 2011



1.

Վաղ առավոտ եր:

Ձյունի մեջ թաղված գյուղի ուղղու-  
թյամբ սլանում եր մի ձիավոր:

Նա հողմի արագությամբ գյուղը մտավ  
և առանց ձին կանգնեցնելու հարցրեց փո-  
ղոցում գտնվող կարմիր բանակայիններին.

— Վրտեղ ե շտաբը:

— Վոր ծովես քեպի աջ, յերրորդ տունը  
շտաբն ե, — պատասխանեցին նրանք:

Ձիավորն արագ սլացավ քեպի աջն տունը,  
ձիուց ցած թռավ, սանձի ծայրն անցկացրեց  
ցանկապատին ու ներս մտավ:

Ձրավորը հագիվ 17 տարեկան կլինեք:



Աչքի եյին ընկնում նրա յերկար գրատը և հեծելակի հրացանը:

— Ո՞ւմ եք ուզում, — հարցրեց սեղանի մոտ նստած մարդը:


— Յես շտապ ուզում եմ գնդապետին տեսնել, — պատասխանեց յեկվորը:

— Սպասեցեք:

Մի քանի րոպեյից հետո ներս մտավ զընդապետը:

— Ի՞նչ կա, ընկեր, — հարցրեց նա:

Յեկվորը դանակով կտրեց գրատի փեշի կարը, մի նամակ հանեց ու տվեց գնդապետին:



Գնդապետն արագ նամակն աչքի անցկացրեց ու ասաց:

— Ընկեր Յանեկ, դուք կֆաք շտաբում: Կարող եք գնալ:

Յերբ վոր լրաբերը դուրս գնաց, գնդապետը դարձավ իր ոգնտկանին.

— Լսիր, Վասիլ, մեր զործը վատ ե: Կարգա, թե ինչ լուր ե բերել այդ փոքրիկը: Վասիլը նամակը կարդաց ու ասաց.

— Այո, լավ չե: Պետք ե հրամակագմին խորհրդակցության կանչել:


— Իսկ տղան քաջ տղա յե, — ծիծաղեց գնդապետը: Տեսա՞ր վորտեղ եր թագեցրել նամակը. հեշտ չեյիք գտնի:

2.

Այն գունդը, ուր յեկավ լրաբեր Յանեկը, գտնվում եր Գոլուշկին գյուղում — ճակատից 7 կիլոմետր հեռավորության վրա:

Յանեկն ամեն որ զարթնում եր աքաղաղների հետ, ամբողջ ուրը կատարում շտաբի

43395.63



հանձնարարությունները, իսկ ազատ ժամանակ զբաղվում իր սիրած գործով — հացից, կավից մարդ, ձի, շուն եր ծեփում:

— Յես տեսնում եմ, վոր դու շնորքով տղա յես, — ասաց մի անգամ գնդապետը: Շուտով թշնամուն կհաղթենք և քեզ սովորելու կուղարկենք. դու լավ քանդակագործ կդառնաս:

Յանեկի դեմքի վրա ուրախության ժպիտ յերևաց:

3.

Մի անգամ ցերեկով մի լրաբեր յեկավ, գնդապետին մի նամակ հանձնեց ու յետ գնաց:

Իսկ գիշերը լավեց հրետանու ծանր բոմբյունը և գնդացիների տրաքտրաքոցը: Առավոտյան դեմ հրաձգությունը հանդարտվեց: Ցերեկով գնդապետը գունդը գյուղից գուրս հանեց և ասաց.



— Ընկերներ, մեր գնդին մարտական զփվար խնդիր ե տրված: Այսօր առավոտյան մեր զորքի մի մասը յետ նահանջեց, իսկ մյուս մասը մնաց, վոր զսպի սպիտակների գրոհը: Մեզ հանձնարարվում ե փոխաբինել այդ զորամասին և նրան նահանջելու հնարավորություն տալ: Մենք պետք ե զրավենք այդ զորամասի տեղը և մինչև վերջին



հնարավորութիւնը զօպենք թշնամուն: Յեր-  
կիրը մեզից այդ ե պահանջում: Յե՛վ մենք,  
ընկերներ, այդ պետք ե անենք: Մի քանի  
որից հետո մեզ ոգնութեան կզան: Ձեզանից  
պահանջում եմ կարգապահութիւն, սառնա-  
սրտութիւն և կայունութիւն:

Բարձր ուռան յեղով պատասխանը:

Հենց վոր մթնեց, գունդը ղիրքերը գնաց  
և գիշերը փոխարինեց այն զորամասին, վորը  
գիմադրութիւն եր ցույց տալիս սպիտակ-  
ներին:

Հենց վոր լուսանալ սկսեց, սպիտակները  
կարմիրներին վրա կրակ բաց արին:


Տա-տա-տա... ճարճատեցին գնդացիները:

Բո՛ււմ... բո՛ււմ... Տա տա-տա... գնդացի-  
ների դեմ կռիւի դուրս յեկան թնդանոթները:

Կարմիրներն ել հարվածին հարվածով ելին  
պատասխանում:

Վախենալով գրո՞հ տալուց, առանց թիկուն-  
քում պահեստի զորամասեր ունենալու, կար-  
միրները միայն հրաձգութեամբ պաշտպան-  
վում եյին:

Կովի հենց առաջին որը Յանեկի ձին խփվեց: Վայր ընկնելիս ձին նրա վրա վռտը փռաց և Յանեկին ուղարկեցին գյուղ — վերակապական կայանը:



4.

Շղթայում կարմիր բանակայիններն անգործ ձանձրանում էին:

— Սատանաներ, գոնե գրոհեյին, — խոսում էին նրանք իրար հետ: Բայց վոչ, սպիտակները գրոհից այնպես են վախենում, ինչպես շունը փայտից:

Յերեկո եր, բայց զնդացրային կրակը և Թնդանոթների պայթույթները չեյին դադարեց:

Հանկարծ գոչեցին.

— Ողանավ, ողանավ... կրակեցեք, ընկերներ:

Կարմիրներն սկսեցին ողանավին կրակել: Ողանավը մի քանի պտույտ անելով, անհետացավ սպիտակների դիրքերի թիկունքում: Յեվ դրանից հետո, կրակոցն իսկույն սկսվեց:

Ողանավի՝ կարմիրների մեջ առաջացրած խուճապից առույգացած, սպիտակները գրնդակոծությունն ուժեղացրին:

— Տղերք, հո չե՞նք մեռնելու, գյուղը վերադառնանք, — ցրտից ատամները չխկչխկացնելով ասաց կարմիր բանակայիններից մեկը:

— Վախկոտ, դեռ կամավոր ել ե, — ձայն տվին մի քանիսը:

— Վախկոտի վզակոթին տվեք, տղերք. ինչո՞ւ յե խուճապ առաջացնում:

Հանկարծ սպիտակների դիրքերը ծխով պատեց:

Յեվ յերբ ծուխը ցրվեց, կարմիրները

նկատեցին, վոր սպիտակները շարժվելով,  
իրենց աջ թևի թիկունքն են անցնում:

— Հեծելազորը մեր յետևն ե անցնում:

— Մի կերպ ազատվեցեք, տղերք: Պա-  
ները մեզ կաղամբի պես կկոտորեն, — գո-  
չեցին վոմանք:

Այս աղաղակը շփոթեցրեց շատերին:

Մարդիկ դուրս ելին թռչում խրամա-  
ներից և սարսափած դեպի գյուղը վազում:  
Նրանք սայթաքում ելին, ընկնում, վեր կե-  
նում, կրկին ընկնում, դեպի յետ նայում,  
կռնում և առաջ վազում:

Գնդապետը նազանը ձեռքին առաջ վազեց  
և աշխատում եր կանգնեցնել խենթացած  
մարդկանց:

— Կանգ առեք, ընկերներ: Ո՛ւր եք վա-  
զում: Առաջ, — խուզոտ ձայնով գոչում  
եր նա:

— Համազարկ տվեք:

Մի քանի կարմիր բանակայիններ աղա-  
ղակում ելին.

— Ընկեր հրամանատար, փախեք, կսպանեն:





— Յեա ձեզ... — գոռում եր գնդապետը,  
սաստիկ հուզված: Առաջ, ընկերներ: Իմ  
յետևից...

Բայց նահանջողները նրան չէյին լսում:  
Գյուղը մոտ եր: Ահա ջրհորի սյունը, ահա  
աճառը...

Բայց այս ի՞նչ ե...:

Նահանջող մարդկանց վողջ մասսան հան-

կարծ քարացավ տեղում. կարծես մի ան-  
հաղթահարելի պատվարի դեմ առավ...

Ապուտ յերկնքի ֆոնի վրա պատկերացե-  
րը լենինի հսկա կերպարանքը...

Նա ձեռքը պարզել եր առաջ, դեպի սպի-  
տակները...

Նահանջող կարմիր բանակայինների խում-  
բը քարացավ:

— Լե — նի — ն...:

Խուճապի մատնված կարմիր բանակային-  
ների հետ մի անբացատրելի բան պատահեց:

Յերեսները դեպի հեծելազորը դարձնելով,  
նրանք «Լե-ե-նի-ն, Լե-ե-նի-ն» գոչելով վա-  
զեցին դեպի սպիտակները:

Սպիտակ սպան, թուրը թափահարելով,  
գոռում եր զինվորների վրա ու հայհոյում:

Գյուղից, առանց թամբի գյուղական ձիեր  
նստած, վրա հասավ կարմիր բանակային-  
ների մի դասակ: Դասակի առջևից սլանում  
եր Ֆանեկը:

Հրացանների փողաբերաններից բռնած, դա-  
սակը միվեց սպիտակների հեծելազորի մեջ...



— Սատկեցրիք ոձերին, տղերք, — գոչում  
 էր Յանեկը, հրաքանի կոթով աջ ու ձախ  
 խփելով:

Թշնամու հեծելազորը խուճապի մասնվեց  
 ու յետ նահանջեց:

Կարմիրներն անխնա կրակելով դեպի  
 փախչողները, հարձակվեցին նրանց վրա:

— Լենին, Լենին... — լսվում էր թնդյուն-  
 ների միջից:


##### 5.

Սպիտակների թողած խրամատներում  
 կարմիրներն իրենց կարգի յեն բերում, կըռ-  
 վից հետո հանգստանում:

Գնդապետը գլուխը վերակապ կապած,  
 գիտում էր հոգնած կարմիր բանակային-  
 ներին և սիրտ տալիս:

Մտախոհ կանգ առնելով մի խումբ կար-  
 միր բանակայինների մոտ, նա հարցրեց.

— Ընկերներ, ո՞վ գիտե, թե այս բանը  
 ինչպես պատահեց: Ո՞վ առաջինը անդամ  
 «Լենին» գոչեց և ինչու:





— Ընկեր հրամանատար, չե՞ վոր մենք  
բոլորս նրան տեսանք:

— Ո՛ւմ չնրան:

— Լենինին: Նա կենդանի կանգնած եր  
մեր առաջ և ձեռքը դեպի սպիտակներն եր  
պարզել:

Այս միջոցին, կարծիր բանակայիններից մի  
քանիսը, վորոնք կովի ժամանակ մնացել  
եյին գյուղում, ասացին, վոր զիշերը Յանեկը  
գյուղի ծայրին ձյունից ծեփել եր Լենինի  
հսկա արձանը, մոխրով գույն տվել, այն-  
պես վոր հնավից արձանը կենդանի մարդու  
յիբ նման: Հենց այդ արձանն եր, վոր տե-  
սան նա՛նանջողները խուճապի ժամանակ:

— Ահա թե ի՛նչ, — մտախոհ ասաց հրամանա-

տարը: Ուրեմն Յանեկն ողնել ե մեզ...  
կեցցե՞... կանչեցեք Յանեկին, — հրամայեց  
գնդապետը:

Շատ ման յեկան, բայց Յանեկին վոչ մի  
տեղ չգտան:

Շտապ կարգով ձիավորներ ուղարկվեցին.  
նրանք վերադարձան ու զեկուցեցին:

— Ընկեր հրամանատար, Յանեկը ծանր  
վիրավորված ե: Նա այժմ գտնվում ե գյուղում:



<< Ազգային գրադարան



NL0390432

20 400.

Ц11 34

3299

и 81  
- 800 /



В. ЗИНДЕ

# СНЕЖНЫЙ ЛЕНИН

АРМЕНГИЗ — ЕРИВАНЬ

